ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Զեկուցող՝ Սարգիս Մարկոսյան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ԳԱԼԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԷՐ.

Ռազմական գիտության զարգացման և թռչող սարքերի ի հայտ գալու հետ

Ռազմական գործողությունների վարման նոր տակտիկա



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞ՆՉ է → **Միջոցառումների համակարգ է**

Ի՞ՆՉԻՆ է ՈՒՂՂՎԱԾ →

- ուղղված է բնակչության ու նյութական արժեքների պաշտպանությանը
- ուղղված է բնակչության ու նյութական արժեքների պաշտպանության նախապատրաստմանը

ԳՈՐԾԻ է ԴՐՎՈՒՄ →

- ՀՀ վրա զինված հարձակման դեպքում
- ՀՀ վրա զինված հարձակման անմիջական վտանգի առկայության դեպքում
- ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում


ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ
ՔՊ
ՄԻՋՈՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ
ՀԻՄՆԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԻՆ ԴԱՍՎՈՂ ՏԱՐԱԾՔ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԸՆԴԳՐԿՈՂ ՏԱՐԱԾՔ

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

ՀԱՏՈՒԿ, ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԸՆԴԳՐԿՈՂ ՏԱՐԱԾՔ

Պետական նշանակության օբյեկտներ

- Պետական կառավարման մարմիններ
- ՏԻՄ-եր

Ռազմավարական նշանակության օբյեկտներ

- Օդանավակայան
- Կապի հանգույցներ
- Հեռուստակենտրոններ
- Ճանապարհներ
- Հեռուստաաշտարակներ

Բարձր վտանգավորություն ունեցող օբյեկտներ

- ՀԱԷԿ
- Քիմիական ձեռնարկություն
- Ջրամբար
- Պոչամբար
- և այլն

Բնակչության կենսագործունեությունը ապահովող օբյեկտներ

- Ջրամատակարարման և ջրահեռացման ցանցեր
- Հացի փռեր
- Սննդի օբյեկտներ
- Էլեկտրաէներգիա
- Գազամատակարարում
- Վառելիքաքսուկային պահեստներ
- Սննդի պահեստներ և այլն

Քաղաքացիական պաշտպանության համակարգի խնդիրը, ոչ միայն բնակչության և նյութական արժեքների պաշտպանությունն է, այլ նաև **տնտեսության որոշ ճյուղերի կայուն աշխատանքի ապահովումը** և առաջին հերթին այն օբյեկտների կայուն աշխատանքը, որոնք պետք է ապահովեն բնակչության կենսագործունեությունը:

ԽՆԴԻՐՆԵՐ

- խնդիրներ, որոնք կապված են **բնակչության պաշտպանության** հետ
- խնդիրներ, որոնք կապված են **տնտեսության պաշտպանության** հետ
- խնդիրներ, որոնք կապված են **փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների** կազմակերպման և իրականացման հետ

Յուրաքանչյուր երկիր՝ իր ՔՊ խնդիրները պլանավորելուց, պետք է հաշվի առնի իր երկրի առանձնահատկությունները.

ՔՊ տեսանկյունից՝ մեր երկրի համար կարևոր են հետևյալ հանգամանքները.

- 10 մարզից 9-ի սահմանամերձ լինելը:
- Մայրաքաղաք Երևանի տեղադիրքը, որտեղ կենտրոնացված են պետական կառավարման հանրապետական մարմինները: Նյութական և ֆինանսական միջոցները նույնպես շատ մոտ են գտնվում Թուրքիայի պետական սահմանին:
- Երկրի բնակչության համարյա 70%-ը բնակվում է Արարատյան դաշտավայրում և կից տարածքներում, մեծ մասամբ իրար հարակից բնակավայրերում:
- Եղած տնտեսական հնարավորությունները տեղաբաշխված չեն երկրի ամբողջ տարածքում, այլ հիմնականում կենտրոնացված են նույնպես Արարատյան դաշտավայրում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

ՏԱՐԱՀԱՆՈՒՄ

ՊԱՏՍՊԱՐՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՏԱՐԱՀԱՆՈՒՄ

ՏԱՐԱՀԱՆՈՒՄՆ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է **վտանգավոր տարածքից անվտանգ տարածք** բնակչության կամ բնակչության մի մասի, ինչպես նաև նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխման ու տեղաբաշխման միջոցով:

ՓՈՒԼ 1

Ժամանակավոր տեղակայման վայրեր

Օրինակ - կինոթատրոններ, ակումբներ, ուսումնական հաստատություններ, հյուրանոցներ, հանրակացարաններ, վրանային ավաններ և այլն:

ՓՈՒԼ 2

տևական բնույթի արտակարգ իրավիճակների կամ մշտական բնակության վայր վերադառնալու անհնարինության դեպքում բնակչությանը ժամանակավոր տեղակայման կետերից տեղափոխում են երկարատև բնակության կետեր, որտեղ հնարավոր է բնակչության երկարատև և համակողմանի կենսագործունեության ապահովումը:

Տեղաբաշխման տեղերը ընտրվում են նախօրոք

ՊԱՏՍՊԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակներում բնակչության պատսպարումը **պաշտպանական կառույցներում** մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է:

- ստորգետնյա հատուկ շիններ՝ **ապաստարաններ, թաքստոցներ** (հակաճառագայթային, պարզագույն, նկուղներ, կիսանկուղներ, խորացված տարածքներ, հանքախորշեր, ստորգետնյա անցումներ), մետրոպոլիտեն:

- բնակելի ֆոնդի տարածքներ (առաջին հարկի տարածքներ՝ հարմարեցված որպես հակաճառագայթային թաքստոցներ, նկուղներ, կիսանկուղներ):

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են.

- պաշտպանական կառույցների **վաղօրոք շինարարությունը**.
- պաշտպանական կառույցների **պահպանումը պատրաստ վիճակում**.
- պաշտպանական կառույցների **նպատակային օգտագործման կազմակերպումը.**
- **արագ կառուցվող ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը՝** պատերազմի սպառնալիքի ժամանակ:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1

առաջին հերթին՝

- սահմանամերձ՝ մինչև 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությունը,
- փրկարար ուժերի անձնակազմը,
- Հայկական ԱԷԿ-ի շուրջ 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությունը և կազմակերպությունների աշխատողները.
- քիմիական վտանգավոր օբյեկտների անձնակազմը.

2

երկրորդ հերթին՝

- Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան և Հրազդան քաղաքների կազմակերպությունների աշխատողները.
- Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան և Հրազդան քաղաքների բնակչությունը.

3

երրորդ հերթին՝

- մնացած բնակավայրերի բնակչությունը:

ГП-5
200-1-00

ԱԶԴԱՐԱՐՈՒՄ

Ազդարարման ազդանշանները տրվում են կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ էլեկտրաշչակների և բարձրախոսային (ստացիոնար և շարժական) սարքերով, հեռուստատեսությամբ, ռադիոհեռարձակմամբ, համացանցային կապով ու հեռախոսակապով՝ հետևյալ դեպքերում.

«Օդային տագնապ»

Տրվում է ՀՀ վրա օդային հարձակման դեպքում

2-3 րոպե ընդհատվող ազդանշան

«Ուշադրություն բոլորին»

արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ վրա զինված հարձակման և դրա անմիջական վտանգի առկայության, ՀՀ վրա օդային հարձակման ավարտի դեպքերում:

2-3 րոպե անընդհատ ազդանշան

ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ իրականացվում է **բոլոր հնարավոր միջոցներով և եղանակներով** (հեռուստացույց, ռադիո, բջջայիններ, ինտերնետ, բարձրախոսային համակարգեր, շչակներ և այլն):

40 C

Շչակ

Շչակ

C 28

Շչակ ձեռքի CO 100

Շչակ ձեռքի CO

сирена AL-F1 ձայնա-լուսային շչակ

Շչակ ձեռքի CO 120

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Պաշտպանական հատկություններից կախված ՔՊ պաշտպանական կառույցները բաժանվում են **ապաստարանների** և **հակաճառագայթային թաքստոցների** (ՀՃԹ): Պատսպարման համար կարող են օգտագործվել նաև **պարզագույն տեսակի թաքստոցները:**

- ✓ Պաշտպանական կառույցներում պատսպարումն իրականացվում է ՔՊ ազդանշաններով:
- ✓ «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում բնակիչներն անհապաղ պատսպարվում են համապատասխան պաշտպանական կառույցներում, իսկ «Օդային տագնապի ավարտ» ազդանշանի դեպքում դուրս են գալիս պաշտպանական կառույցներից:
- ✓ Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված ամրագրման պլանների համաձայն:

ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐ

Թշնամու կողմից բոլոր տեսակի խոցման միջոցների կիրառման կամ ճառագայթային, քիմիական, մանրէաբանական խոցման գործոններով վթարների և աղետների պայմաններում **առանց** անհատական պաշտպանական միջոցների մարդկանց երկարատև մնալու համար հարմարեցված, կամ կառուցված ամուր (սովորաբար՝ խորացված), հերմետիկ կառույց:

Տարբերակվում են.

- Զորային ապաստարաններ
- Քաղաքացիական ապաստարաններ

ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



1. պաշտպանիչ, հերմետիկ դռներ,
2. նախասրահներ,
3. մարդկանց տեղավորման և հանգստի տարածք,
4. վթարային ելք,
5. օդափոխիչ համակարգի տեղամաս,
6. սանիտարահիգիենիկ տարածք,
7. բուժկետ,
8. մթերքի պահեստ,
9. դիզելային էլեկտրակայան,
10. կապի սենյակ,
11. ղեկավարման կետ:


1
2
3
4
5
6
8
7
2
1

ԱՌԱՆՁԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱԿԱՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԹԱՔՍՏՈՑ



1. հողային ծածկույթ,
2. օդաքաշ օդափոխման տուփախողովակ,
3. ներքաշող օդափոխման տուփախողովակ,
4. մուտք,
5. երկաթբետոնե ծածկ,
6. հավաքատեղի,
7. ննջասենյակ

1.Ուղիղ ճառագայթահարում,
2.Անդրադարձված ճառագայթահարում,
3.Ճառագայթահարման թուլացում կամ բացակայություն



Կախված շինության կառուցման նյութից տարբեր շինություններ տարբեր աստիճանով են նվազեցնում ռադիոակտիվության ֆոնը







Շենքի կիսանկուղային փարածքը որպես հակաճառագայթային թաքստոց՝

1. լրացուցիչ ամրակապում,
2. լրացուցիչ հողածածկ – 30սմ,
3. պատուհանների փակում աղյուսով կամ քարով,
4. գետնափարած պատուհանների և կողապատերի փակում հողով,
5. ներքաշող օդափոխման փուփախողովակ,
6. օդաքաշ օդափոխման փուփախողովակ

Շենքի առաջին հարկը որպես հակաճառագայթային թաքստոց՝

1. լրացուցիչ ամրակապում,
2. հողով լցված միջնապատ – 25սմ,
3. լրացուցիչ հողածածկ – 30սմ,
4. պատուհանների շարում աղյուսով կամ քարով և պատուհանների փակում փախտակով ու հողով,
5. օդափոխման ճեղքեր

Որպես պարզագույն թաքստոցներ կարող են ծառայել.

- Ճեղքերը
- Փոսորակները
- Անձավները, քարայրները
- Խորշերը, խոռոչները
- Հողաթմբերը
- Խրամատները
- Խրամուղիները
- Բլինդաժները
- Նկուղները
- Կիսանկուղները
- Գետնափոր տները
- Մառանները
- Ներքնատները
- Այլ:

04/01/2017 15:08

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ